# Տարոսիկ - Մարտ-Ապրիլ

Տի՛զ տիզ Ակլատիզ,
մազերը պի՛զ պիզ Ակլատիզ...
Մեծ Պահքի Ակլատիզ...

Մէ՛կ փետուր,մէ՛կ շաբաթ,
երկո՛ւ փետուր, երկո՛ւ շաբաթ,
երե՛ք փետուր, երե՛ք շաբաթ,
Միջի՛նք է։

Տի՛զ տիզ Ակլատիզ,
մազերը պի՛զ պիզ Ակլատիզ,
Մեծ Պահքի Ակլատիզ...

Չո՛րս փետուր,չո՛րս շաբաթ,
հի՛նգ փետուր, հի՛նգ շաբաթ,
վե՛ց փետուր, վե՛ց շաբաթ,
Նաւակատիք
եւ Զատի՛կ...

Կարկաչա, կարկաչա,
կարին կաչա կարկաչա...

Կարմիր կովէն կաթ կ՚ուզեմ,
կարմիր կովէն իւղ կ՚ուզեմ,
չալ հաւէն ալ հաւկիթ կ՚ուզեմ,
կարմիր հաւկիթ ներկել կ՚ուզեմ...

Կարկաչա, կարկաչա,
կարին կաչա կարկաչա...

Զատկին լաւաշ թխեցինք,
չամչով փիլաւ եփեցինք...
Չամչով փիլաւ եփեցինք,
կարմիր հաւկիթ ներկեցինք...

Լուսնակն անուշ, հովն անուշ,
աղօթրանի լուսն անուշ...

# Տարոսիկ - Մարտ-Ապրիլ

Կարմիր հաւկիթ ներկեցինք,
ածիկին մէջը շարեցինք...
Ածիկին մէջը շարեցինք,
Զատկին ուրախ պարեցինք...

Լուսնակն անուշ, հովն անուշ,
աղօթրանի լուսն անուշ...

Թեզանիքներդ սոթտէ... սոթտէ...
գոգնոցդ կապէ... ե՜ւ...

Մամիկս ալիւր կը մաղէ,
մամիկս խմոր կը շաղէ...
Պարկը գոց,
պարկը բաց...
Ամբո՛ղջը գնաց,
բա՛ն չմնաց...

Մամիկը ի՞նչ կը թխէ...
Քեխքէ՛...
Գաթա՛...
Նազո՛ւկ...
Չէօրէ՜ք...
Մեծ Զատիկ,
Պզտիկ Զատիկ...
Պզտիկ Թոռնիկ,
մեծ թոռնիկ,
թոռնիկներուն համար
ամե՛ն օր Զատիկ...